ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

ԱՖՍԱՆԵՀ ՇԻՐԱՆԻ

Բանալի բառեր – Լեռնային Ղարաբաղ, հայ - թուրքական հարաբերություններ, հիմնախնդիր, պատերազմ, Կովկաս, տարածաշարջան, քաղաքական, կայունություն, զարագացում:

1. Հարավային Կովկասի էթնոկրոնական իրավիճակը

Ամբողջ պատմության ընթացքում կովկասյան տարածաշրջանը իր աշխարհաքաղաքական դիրքի շնորհիվ եղել է Արևելքի և Արևմուտքի խաչմերուկը և մրցակցության բեմահարթակը: Տարածաշրջանը 7-րդ դարից ի վեր, կարելի է ասել, եղել է իսլամական և քրիստոնյա աշխարհի սահմանը: Այս տարածաշրջանը գտնվել է ցարական, սեֆյան և օսմանյան, իսկ վերջին դարի ընթացքում տարածաշրջանային ուժային տերությունների՝ Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի ուշադրության կենտրոնում: Եվրասիական մայրցամաքի՝ Կասպից և Սև ծովերի ափերի արանքում ընկած կովկասյան տարածաշրջանը ժամանակակից աշխարհի քաղաքական զարգացումների հետևանքով եղել է էթնոքաղաքական հակամարտությունների, բախումների և պատերազմների թատերաբեմ:

Հարավային Կովկասում ապրում են հայեր, ադրբեջանցիներ, վրացիներ և ուրիշ ազգեր: Ըստ Կենտրոնական հետախուզական գործակալության (The Central Intelligence Agency-CIA)[1] էլեկտրոնային բազայի վերջին տվյալների, տարածաշրջանի երեք հանրապետությունների բնակչության ընդհանուր թիվը կազմում է 18227566 մարդ, այդ թվում՝ Հայաստանի[2] բնակչությունը՝ 3,011,609[3] (2021.), Ադրբեջանի բնակչությունը[4]՝

[1] https://www.cia.gov/the-world-factbook/ (2021)

[2] Border countries (4): Azerbaijan 996 km, Georgia 219 km, Iran 44 km, Turkey 311 km

[3] Age structure 0-14 years: 18.64% (male 297,320/female 265,969) 15-24 years: 11.63% (male 184,258/female 167,197) 25-54 years: 43.04% (male 639,101/female 661,421) 55-64 years: 14.08% (male 195,754/female 229,580) 65 years and over: 12.6% (male 154,117/female 226,607) (2020 est.)

[4] Border countries (5): Armenia 996 km, Georgia 428 km, Iran 689 km, Russia 338 km, Turkey 17 km.

10,282,283[1] (2021), Վրաստանի բնակչությունը՝ 4,933,674 (2021) մարդ: Հայաստանը երեք անդրկովկասյան հանրապետությունների միջև 98.1% հայ բնակչությամբ միատարր (ոչ բազմազգ) հանրապետություն է: Ադրբեջանը և Վրաստան բազմազգ հանրապետություններ են: Ադրբեջանի բնակչության 91.6%-ը ադրբեջանցիներ են, 2% լեզգիներ, 1.3% ռուսներ, 1.3% թալիշներ, 2.4% այլ ազգեր[2]: Վրաստանի բնակչության 83.8%-ը վրացիներ են, 6.5%-ը՝ ադրբեջանցիներ, 5.7%-ը՝ հայեր, 1.5%-ը՝ ռուսներ, 2.5%-ը՝ այլ ազգեր: (Ավելի մանրամասն տե՛ս վերոհիշյալ էլեկտրոնային բազայում): Ներկայումս Ադրբեջանում ազգությամբ ադրբեջանցիները կազմում են երկրի ավելի քան 90 տոկոսը, իսկ ազգությամբ դաղստանցիները ավելի քան 3 տոկոս և ռուսները՝ 2,5 տոկոս:[3]

2. Հարավկովկասյան տարածաշրջանի հակամարտությունները

Իրականում հարավկովկասյան տարածաշրջանի հակամարտությունները և դրանց դրդապատճառները պատմական ժառանգություն են այս տարածաշրջանի համար: Վերջին տասնամյակների ընթացքում այս տարածաշրջանը ականատես է եղել էթնիկական, քաղաքական և տարածքային հակամարտությունների: Հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հակամարտությունները Մերձավոր Արևելյան տարածաշրջանի երկու հիմնական և փոխկապակցված հակամարտություններն են: Հայ-թուրքական հակամարտության պատմական արմատները ընդգրկում են երկհարյուրամյա մի ժամանակաշրջան, որի առաջին նշանները արտահայտվում են Ադրիանապոլիսի պայմանագրից (1829թ.) հետո, իսկ ավելի ուշ՝ իր գագաթնակետին են հասնում Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ կապված 1915թ. հայոց ցեղասպանության հետ:

Հարավային Կովկասի հակամարտությունները կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի.

1) Ինքնավարության արժեզրկմամբ պայմանավորված հակամարտություններ՝ ղարաբաղյան[4], աբխազական և հարավօսական հակամարտությունները, որոնք ազգերի ինքնորոշման իրավունքի համաձայն՝

---

[1] Age structure 0-14 years: 22.84% (male 1,235,292/female 1,095,308) 15-24 years: 13.17% (male 714,718/female 629,494) 25-54 years: 45.29% (male 2,291,600/female 2,330,843) 55-64 years: 11.41% (male 530,046/female 634,136) 65 years and over: 7.29% (male 289,604/female 454,769) (2020 est.)

[2] Estimates from "The World Factbook" Central Inteligence Agency. Available at: https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/aj.html

[3] Estimates from "The World Factbook" Central Inteligence Agency. Available at: https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/am.html

[4] Ղարաբաղյան հակամարտության իրավական ու քաղաքական փաստերի ու փաստարկների մասին տե՛ս. **Մանասյան Ա.,** Ղարաբաղյան հակամարտություն իրավաքաղաքական փաստերի ու փաստարկների նվազագույն փաթեթ , Եր., 2008:

Մանասյան Ա., Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Եր., 2003:

ձգտում են անկախության: Տվյալ երեք շրջանները փորձում են ճանաչվել և դուրս գալ Ադրբեջանի և Վրաստանի կազմից:

Հարավային Օսեթիան և Լեռնային Ղարաբաղը անկախացել են Վրաստանի և Ադրբեջանի կազմից, սակայն նրանց անկախությունը չի ճանաչվել Ադրբեջանի և Վրաստանի կողմից: Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարցի վերաբերյալ պնդում է, որ այդ ոչ թե Ղարաբաղի հայ ժողովրդի ինքնորոշման խնդիր է, այլ Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճ[1]: Բաքուն հակամարտությունը որակում է որպես Հայաստանի կողմից «ագրեսիա»՝ ուղղված Ադրբեջանի տարածքային ամբողջականության դեմ[2]:

Միջազգային հանրության կողմից կատարած աշխատանքները վերոհիշյալ երեք հակամարտությունները կարգավորելու ուղղությամբ էական փոփոխությունների չեն հանգեցրել: «ԵԱՀԿ-ն և այլ միջազգային մարմիններ մասնակցել են բանակցությունների գործընթացին, սակայն արձանագրելով որոշ համեստ նախնական արդյունքներ, ցավոք, պետք է նշենք, որ երեք հակամարտություններն էլ դեռ փակուղում են», - գրում է պրոֆ. Հ. Քոթանջյանը[3]: Իսկ ԼՂ-ի հակամարտության դեպքում, ինչպես ցույց տվեց վերջին զարգացումները, հանգեց 2020թ. արցախյան երկրորդ պատերազմին:

2) ՀՀ և Թուրքիայի հակամարտությունը: 1991թ. Խորհրդային Միության փլուզումը նշանակալից հետևանքներ ու մեծ ազդեցություն թողեց տարածաշրջանում և միջազգային ասպարեզում: Այս փլուզման առավել ակնհայտ ազդեցությունը Կովկասում և Կենտրոնական Ասիայում հանգեցրեց աշխարհաքաղաքական զգալի վակուումի: Դրա հետևանքով արմատական փոփոխություններ տեղի ունեցան խնդրո առարկա տարածաշրջանի հակամարտությունների, տնտեսական և քաղաքական ճգնաժամերի և շահագրգիռ երկրների դերակատարության և գործելակերպի ոլորտում:

ՀՀ և Թուրքիայի փոխհարաբերություններին առնչվող հրատապ թեմայի հետ կապված երկու երկրների համադրությունը և հակադրությունը, խնդրո առարկա փոխհարաբերությունների տարածաշրջանային

---

[1] Այս կապակցությամբ մանրամասն տե՛ս **Kotanjian H. S.**. Ethnic Conflicts in Kosovo and Nagorno Karabakh in Comparative Perspective. “Center for Defense Information”. http://www.cdi.org/issues/Europe/kotanjian.html.
http://www.harvardbssp.org/files/2005/presentation/publications/KOTANJIAN_THE_SOUTH_CAUCASUS_DEVELOPING_ENG.pdf

[2] **Քոթանջյան Հ.,** Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Եր., 2008, էջ 71:

[3] **Քոթանջյան, Հ.,** նշվ. աշխ., էջ 72:

առաջնահերթությունը և կարևորագույն նշանակությունը հանգեցնում են նրան, որ հիմնահարցը դուրս է գալիս է զուտ տեղական շրջանակներից և երևակվում աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում:

Կողմերի տարաձայնությունները ընդհանուր պատմական անցյալի մասին, հանցագործությունների փոխհատուցման և տարածքային վեճերի ու փոխադարձ վստահության պակասի պատճառներով, առ այսօր հայ-թուրքական հակամարտությունը մնում է աշխարհի չլուծված հակամարտությունների շարքում:

Ի դեպ, արդի Հայաստանի երկրառազմավարական գերակայությունների սահմանման պարագայում խնդիրը, ինչպես դիտարկել են քաղաքագետները, քննվել է երկշերտ կտրվածքով՝ միջազգային ու տարածաշրջանային՝ իմաստավորելով նրանց պատկերացումները արդի Հայաստանի նկատմամբ ու դրանց հակադարձումը:[1]

Ինչ վերաբերում է Թուրքիայի միջազգային քաղաքական իրավիճակին, ապա տարածաշրջանային համատեքստում Թուրքիան ներգրավված է Մերձավոր Արևելքում՝ Եգիպտոսի և Լիբիայի ծանր անցումային փուլերի գործընթացների մեջ և հանդես է գալիս ընդդեմ Սիրիայի և Իրանի: Թուրքիան ներգրավված է նաև տարածաշրջանային այլ խնդիրներում, ինչպիսիք են՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Կիպրոսի և Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հիմնահարցերը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ներկայումս Հայաստանը Անկարայի համար արտաքին քաղաքականության առաջնահերթություն չէ[2], բայց բավարար առաջնահերթություն է Հարավային Կովկասի կտրվածքով:

3. Ռուսաստանը և հայ-թուրքական հակամարտությունը

Նախկին ԽՍՀՄ-ի ազգային փոքրամասնությունների ինքնավարության հայեցակարգի արժեզրկումը նպաստել է ընդհանուր անկայունությանը Կովկասում: Ընդհանուր առմամբ Ռուսաստանը Կովկասում բնիկների նկատմամբ իրականացրել է հետևյալ քաղաքականությունը.

1. զերծ մնալ այն ամենից, ինչը կարող է թուլացնել Ռուսաստանի ուժը տարածաշրջանում,

2. ստեղծել առևտրային հարաբերություններ, առաջացնել այնպիսի պահանջմունքներ, որոնց կարիքը նրանք դեռևս չունեն,

3. պահպանել շարունակական հակամարտությունների իրավիճակ տարածաշրջանի տարբեր ազգերի միջև և երբեք չմոռանալ, որ նրանց միասնությունը կարող է ճակատագրական լինել Ռուսաստանի համար:

---

[1] **Շիրինյան Լ.,** Նոր աշխարհակարգը և Հայաստանը /երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ/, Եր., 2010, էջ 10:

[2] **Phillips D. L.,** Diplomatic History: The Turkey-Armenia Protocols, Institute for the Study of Human Rights in collaboration with the Future of Diplomacy Project, Harvard Kennedy School, 2012.

4. բացարձակապես կանխել նրանց հնարավոր կապերը Թուրքիայի և Պարսկաստանի հետ:[1]

Ռուսաստանը ողջունել է Թուրքիայի և Հայաստանի միջև հակամարտության կարգավորումը՝ այն համարելով տարածաշրջանի խաղաղության միջոց: Մոսկվան փորձել է որպես տարածաշրջանային տերություն, իր ավանդական և առանցքային դերը ցուցադրել Թուրքիա-Հայաստան հարաբերությունների բարելավման հարցում: Ռուսաստանը փորձում է իր այս դիրքից օգտվելով բարելավվել իր հարաբերությունները Ադրբեջանի և Թուրքիայի հետ: Իսկ հիմնվելով իր տարածաշրջանային շահերի և նպատակների վրա՝ քայլեր ձեռնարկել նաև չեզոքացնելու Վաշինգտոնի՝ քաղաքական և տնտեսական միջոցներով տարածաշրջանից Ռուսաստանին հեռու պահելու նպատակները:

Մոսկվան սույն նպատակներին հասնելու համար փորձում է շահել տարածաշրջանի երկրների վստահությունը և այդ ուղղությամբ որոշակի հաջողություններ է ձեռք բերել: Պետք է նշել, որ Հայաստանը տնտեսական, քաղաքական և անվտանգության տարբեր կախվածությունների պառճառով, Թուրքիայի հետ իր հարաբերությունները կարգավորելու հարցում նկատի է առնում Կրեմլի պաշտոնյաների խորհուրդները:

Ըստ վերոհիշյալի՝ կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանը ձգտում է վերականգնել իր առաջատար դերը տարածաշրջանում իր ռազմական կապերը վերականգնելու միջոցով՝ հատկապես երկարաձգելով Հայաստանի հետ պայմանագրերը, որոնք շեշտադրում են էներգետիկ համագործակցությունը (միջուկային էներգետիկ բնագավառում համագործակցությունը Հայաստանի, իսկ գազի գնումները՝ Ադրբեջանի հետ): Ռուսաստանը այս միջոցով ձգտում է առաջատար դեր ունենալ Լեռնային Ղարաբաղի բանակցություններում: Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ չկարողացավ չեզոք դիրքորոշում պահպանել: Ռուսաստանի դերը բանակցություններում ազդեցիկ է, քանի որ առանց նրա համաձայնության հակամարտող երկրները չեն կարող արդյունքի հասնել: Միևնույն ժամանակ, Ռուսաստանը այլևս ի վիճակի չէ կառավարելու իրադարձությունների ընթացքը տարածաշրջանում, ինչը վկայում է իրավիճակի վատթարացումը Հյուսիսային Կովկասում[2]:

Ռուսաստանը Հայաստանի և Թուրքիայի, ինչպես նաև Ադրբեջանի հետ ռազմավարական, անվտանգության և առևտրային շահեր ունի: Մոսկվայի կարճաժամկետ ռազմավարական շահերը սպասարկում են

---

[1] **Cornell Svante E.,** Small Nations and Great Powers, A Study Etnopoltical Conflict in the Caucasus, 2005, p. 16.

[2] **Boonstra, Jos. Melvin, Neil.** "Challenging the South Caucasus security deficit", FRIDE, 2011, p. 10. www.fride.org/download/WP108_South_Caucasus_Eng.pdf

երկու երկրների՝ Հայաստանի և Թուրքիայի հետ լավ հարաբերությունների ապահովմանը. Մոսկվան հետապնդում է մշակված քաղաքակություն՝ հասնել մարտավարական ձեռքբերումների երկու երկրների հետ: Չնայած Թուրքիան նրա ավելի մեծ գործընկերն է, սակայն միաժամանակ Ռուսաստանի երկարաժամկետ ռազմավարական մրցակիցն է:[1]

1995 թ. Ռուսաստանը ճանաչել է հայոց ցեղասպանությունը: Ռուսաստանը և Հայաստանն ունեն համագործակցության երկար պատմություն: Հայաստանը ռազմական կախում ունի Ռուսաստանից, որն անհրաժեշտ է Հայաստանի զոյատևման համար: Ռուսաստանը փորձում է վերահսկել Հայաստանի էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման համակարգը, ինչպես և երկաթուղային ցանցը: Ռուսաստանի և Հայաստանի միջև անվտանգության կապերը նույնպես լայն ոլորտ են ընդգրկում: 2010 թվականին Ռուսաստանը և Հայաստանը երկարաձգել են ՌԴ 102-րդ ռազմակայանի տեղակայումը Գյումրիում՝ մինչև 2044թ.: Ռուսական զորքերը ապահովում են Հայաստանի սահմանների անվտանգությունն ու վերահսկողությունը թուրք-հայկական սահմանի երկայնքով:

Ռուսաստանի և Հայաստանի միջև Անվտանգության համագործակցությունը ընդլայնվում է նաև Հավաքական անվտանգության պայմանագրով (ՀԱՊԿ), որին 1992 թ. մայիսի 15-ին միացել է Հայաստանը: 1999 թվականին Հայաստանը և ՀԱՊԿ-ի հինգ այլ անդամ երկրներ երկարաձգել են իրենց մասնակցությունը այդ կազմակերպությանը: Սակայն նույն տարվա ապրիլին Վրաստանը, Ուզբեկստանը, Ուկրաինան, Ադրբեջանը և Մոլդովան դուրս են եկել և ստեղծել են մի արտադաշինքային միավորում, որ նրա անդամ երկրների անվան սկզբնատառերով կոչվում է «GUUAM»[2] (ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպություն):

Ռուսաստանը շարունակում է զենք վաճառել և՛ Հայաստանին և՛ Ադրբեջանին, չնայած երկու երկրների միջև առկա է ԼՂ հակամարտությունը:[3] Ռուս-թուրքական հարաբերությունների հայկական ընկալումը նույնպես ներթափանցված է կարծրատիպերով և տագնապներով: Կարծիքներ կան, որ Ռուսաստանը և Թուրքիան հնարավոր է համաձայնության գան տարածաշրջանային մի նախագծի շուրջ, որը կարող է վտանգել Հայաստանի շահերը:

---

[1] **David L. Phillips,** DIPLOMATIC HISTORY: The Turkey-Armenia Protocols, Institute for the Study of Human Rights in collaboration with the Future of Diplomacy Project, Harvard Kennedy School, 2012.

[2] http://www.globalsecurity.org/military/world/int/guuam.htm

[3] **David L. Phillips,** 2012.

Սակայն Ռուսաստանը շարունակում է պնդել, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը դիտարկվի անկախ Լեռնային Ղարաբաղի հարցից:

4. Հայաստանը և Թուրքիան որպես Կովկասյան տարածաշրջանի դերակատարներ

Հարավային Կովկասի երկրների ռազմավարական նշանակության մասին թուրքագետ ակադ. Ռ. Սաֆրաստյանը ներկայացնում է հետևյալ բնութագրումը: Կովկասյան տարածաշրջանի յուրաքանչյուր երկիր ռազմավարական հատուկ նշանակություն ունի: Տարածաշրջանում ռազմավարական նշանակություն ունեն Ադրբեջանի նավթային դիրքը, Վրաստանի տարանցիկ լինելը, Թուրքիայի կարևորությունը որպես Արևելքի և Արևմուտքի միջև կամուրջ, և Հայաստանի աշխարհաքաղաքական և ռազմավարական դերը ուժերի հավասարակշռությունը կայունացնելու կամ փոխելու հարցում:

Տարածաշրջանի երկրների ռազմավարական նշանակությունից կարելի է եզրակացնել, որ «Հայաստանը դառնում է «բանալի» պետություն տարածաշրջանում: Եթե Ադրբեջանը նավթ ունի, իսկ Վրաստանը կարևոր է որպես տարանցիկ պետություն, ապա երբ կասկածի տակ է առնվում Վրաստանի տարանցիկ լինելու հանգամանքը, կասկածի տակ է ընկնում նաև ադրբեջանական նավթի գործոնը: Այդպիսով մեծանում է Հայաստանի դերն ու նշանակությունը տարածաշրջանում»[1]:

Թուրքիայի վերահսկողության ոլորտներում գործող Միջերկրական, Էգեյան և Սև ծովերը, Բոսֆորի և Դարդանելի ռազմավարական նեղուցները այս երկրի հատուկ ռազմավարական դիրքերից են համարվում, քանի որ այն բոլոր նավերը, որոնք Էգեյան և Սև ծովերի միջև են շարժվում, ստիպված են ավելի քան 320 կմ անցնել Թուրքիայի ջրերի միջով: Թուրքիայի նեղուցները միակ ելքն են Ռուսաստանի սևծովյան նավատորմի համար: Համաձայն որոշ տեսությունների՝ ելք դեպի ծով համարվել է որպես ազգային ուժի հիմք: Ալֆրեդ Մահանը ծովերի և, հատկապես, ռազմավարական նեղուցների վերահսկողությունն անհրաժեշտ է համարել գերտերությունների համար, ինչը հայտնի է «Մահանի ծովային ուժ» ձևակերպմամբ[2]: Աշխարհաքաղաքական տեսակետից, քանի որ Թուրքիան եվրասիական տարածաշրջանի շփման տարածք է,

---

[1] **Սաֆրաստյան Ռ.,** http://www.tert.am/am/news/2008/10/01/safrastyanruben/, Արմենպրես,

[2] Մանրամասն տե՛ս.

فالتزگراف ،دوئرتی، جیمز، فالتزگراف، رابرت، نظریه های متعارض در روابط بین الملل، ترجمه وحید بزرگی، علیرضا طیب، نشر قومس،۱۳۸۸، ص ۱۱۳-۱۱۴.

Doegherty James E., Pfaltzgraff Robert L., (1981) Contending Theories of International Relations A Comprehensive Survey.

համարվում է ծովային և ցամաքային ռազմավարական կապ[1]:

Թուրքիան փորձում է լրացնել ԽՍՀՄ փլուզման հետևանքով առաջացած բացը: Սակայն այս նպատակին հասնելու համար որոշ խնդիրների առջև է կանգնել, որոնցից ամենակարևորը Լեռնային Ղարաբաղի և Հայաստան-Թուրքիա հակամարտությունն են: Այս խնդիրները ազդում են Թուրքիայի տարածաշրջանային և միջազգային դերակատարության վրա:

Ռազմավարական առումով Հայաստանի սերտ հարաբերությունները Ռուսաստանի և Իրանի հետ նույնպես պետք է դիտարկել Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում: Հայաստանում հաճախ են դատապարտում Թուրքիային և Ադրբեջանին՝ համաթուրքական քաղաքականություն վարելու համար: Ըստ պրոֆ. Ն. Հովհաննիսյանի՝ հայերը համարվում են դեպի Կենտրոնական Ասիա թուրքական տարածմանը խոչընդոտող գործոն: Պարզ է, որ թուրքական ծավալումը, պանթուրքիզմը և թուրքական գոտին Բալկաններից մինչև Չինաստան և Սիբիր՝ մեծ սպառնալիք է բոլոր ոչ թուրք ժողովուրդների և երկրների համար, որ գտնվում են այդ հսկայական տարածքում: Հարկ է նշել, որ այդ ընդհանուր վտանգը կխթանի Ռուսաստանի, Հայաստանի, Իրանի և այլ երկրների մերձեցումը:[2]

Այդ ուղղությամբ Հայաստանում ազդեցիկ և որոշակի շրջանակներ բացահայտորեն վկայակոչում են համաթուրքական վերոհիշյալ սպառնալիքը՝ հետամտելով կառուցելու համագործակցության ուժեղ առանցք՝ Հայաստանի, Ռուսաստանի և Իրանի հետ: Նման առանցքի հիմնական նպատակը, բնականաբար, ուղղված է կանխելու Թուրքիայի ազդեցության տարածումը Կովկասում և Կենտրոնական Ասիայում, նաև՝ Մերձավոր Արևելքում:

Ինչպես նշվեց, Թուրքիան փորձում է տարածաշրջանում ներկայանալ որպես առանցքային երկիր: Վերջին տարիների ընթացքում, չնայած ռազմական սերտ հարաբերություններ են ստեղծված Անկարայի և Թբիլիսիի միջև, Թուրքիան փորձում է պահպանել իր հավասարակշռված հարաբերությունները նաև Մոսկվայի հետ[3]:

Օգտվելով Կովկասում ունեցած իր աշխարհաքաղաքական դիրքից՝ Թուրքիան փորձում է էներգետիկ ռեսուրսների փոխանակման նե-

---

[1] احمدرضا محمدعلي مدي، ايران ـ تركيه؛ موقعيت‌هاي استراتژيك و ژئواكونوميك، روزنامه اطلاعات، شنبه 17 بهمن 1388/2009թ./

[2] **Hovhannisyan, N.**, The Foreign Policy of Armenia, Yerevan, Noyan Tapan, 1998, p 39.

[3] **Charap Samuel, Welt Cory**, 'A More Proactive U.S. Approach to the Georgia Conflicts', Centre for American progress, February 2011.
http:// www.americanprogress.org/issues/2011/02/georgia_report.html12

րուժն օգտագործել իր դիրքի ամրապնդման ուղղությամբ որպես տարածաշրջանի խոշոր առևտրական գործընկեր և ներդրող: Այդ ուղղությամբ Թուրքիան մեծ նշանակություն է տալիս Հարավային Կովկասի տարանցիկ ներուժին, քանի որ այն թույլ է տալիս անվտանգ օգտվելու Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսներից, ինչպիսիք են, օրինակ՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարները: Դրանք թույլ են տալիս Թուրքիային ապահովել իր ներքին էներգետիկ պահանջները և ընդլայնել սեփական էներգետիկ տարանցիկ ներուժը, ինչը մեծացնում է նրա կարևորությունը ԵՄ-ի առջև:[1]

Թուրքիայի հիմնական հետաքրքրություններից մեկը կապված է նավթի քաղաքականության հետ: Թուրքիան հայտարարել էր, որ շահագրգռված է կասպիական նավթի հոսքով՝ դեպի թուրքական միջերկրածովային Ջեյհան նավահանգիստ: Իրաքի նավթամուղների վերաբացումը և իրանական նավթի արտահանումը Թուրքիայի միջոցով՝ երկիրը կդարձնի էներգետիկ գերտերություն: Ինչ վերաբերում է Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսներին, ապա Թուրքիայի քաղաքականության նպատակները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

– Կասպիական նավթը կլինի հիմնական աղբյուր՝ Թուրքիայի ներքին սպառման նկատառումներով, և առավելություն կունենա մերձավորարևելյան նավթից ու ռուսական գազից կախվածությունը նվազեցնելու համար: Բացի այդ, Թուրքիան ակնկալում է զգալի եկամուտներ միջազգային շուկաների հիդրոկարբոնների տարանցիկ փոխադրումից, ինչը կխթանի այս երկրի տնտեսության զարգացումը խողովակաշարերի շինարարության միջոցով:

– Կասպիական նավթը հստակ ռազմավարական նշանակություն է ունեցել, քանի որ դրա արտահանումը Թուրքիայից ենթադրում է տարածաշրջանային քաղաքականության այնպիսի զարգացումներ, որոնց շնորհիվ կբարձրանա Թուրքիայի նշանակալիությունը Արևմուտքի առջև, որը և կնպաստի Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին[2]:

Չնայած Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի նախագծին[3] Թուրքիայի, Ադրբեջանի և ԱՄՆ-ի կառավարությունների ուժեղ աջակցությանը, նավթային ընկերությունները ներգրավվել են Ադրբեջանի

---

[1] The South Caucasus Security Platform Strategy from the Perspective of the Civil Society, Editor Marit Rye Ramberg, Oslo, Norway September 2007. The Norwegian Atlantic Committee Fridtj of Nansens plass 8 N-0160, Oslo, Norway.

[2] **Altunisik Meliha,** 'Turkey's attitude towards the Eurasian Oil: From Euphoria to Pragmatism', in Marco Polo Magazine, nos. 4–5, 1998, pp 24–25. See also: **Cornell Svante E.,** The Nagorno-Karabakh Conflict, Uppsala University, 1999.

[3] Տե՛ս հավելվածում նկար 1:

միջազգային գործառական ընկերության կազմի մեջ /Azerbaijan International Operating Company (AIOC)/: Հատկապես ցանկություն կար գազատարը ֆինանսավորել 1998 թ., նավթի գները նվազելու ժամանակ, երբ մեկ բարելի գինը 10-12 $ էր և բացի այդ, Իրաքում և Իրանում սպասվում էր պատժամիջոցների վերացում:[1]

Թուրքիայի հիմնական հետաքրքրությունը առայժմ ուղղված է ընդլայնելու իր մշակութային, քաղաքական և տնտեսական հարաբերությունները թուրքական երկրների հետ:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ տեսանելի ապագայում գերտերությունների հետ համագործակցությամբ Թուրքիան մտադիր է Կովկասում և Կենտրոնական Ասիայում ստանձնել հիմնական դերակատարի դերը, ինչն ապացուցվեց 2020թ. ղարաբաղյան երկրորդ պատերազմի հետ կապված զարգացումներով:

5. Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցում

Հարավային Կովկասում խաղաղության հաստատման և անվտանգության ապահովման գործում առանցքային խնդիրներից մեկը Արցախյան հակամարտության կարգավորումն է: Մեր կարծիքով Արցախի հակամարտությունը Անդրկովկասի ամենամեծ խնդիրն է, որը խորացավ 1988 թվականին, երբ հայկական մեծամասնությունը Ղարաբաղում, որը ինքնավար շրջան էր Խորհրդային Ադրբեջանի կազմում, փորձեց անջատվել Բաքվի կառավարումից և միանալ Խորհրդային Հայաստանին:

Ժամանակագրական առումով Արցախի շուրջ հակամարտության պատմությունը կարելի է բաժանել հինգ փուլերի: Առաջինը, նախապատմությունը՝ հակամարտությունը տասնիններորդ դարի վերջում, երբ կողմերը դիմեցին ռազմական գործողությունների և երկու երկրներն ընդգրկվեցին Խորհրդային Միության կազմի մեջ, երկրորդը՝ հակամարտության ճնշելու ժամանակաշրջանը խորհրդային տարիների ընթացքում 1921-1987թթ., երրորդը, հակամարտության վերստեղծման՝ վերակառուցման ժամանակաշրջանն է՝ 1987-91 թթ., չորրորդը՝ պատերազմները 1992-94թթ., և վերջապես կարգավորման որոնման ժամանակաշրջան՝ 1994 թ. մինչ այսօր[2]: Իսկ 2020թ. արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով հակամարտությունը սկսում է իր նորագույն փուլը:

Ըստ որոշ վերլուծաբանների, հայ-թուրքական հակամարտության կարգավորումը չպիտի պայմանավորված լինի ԼՂ-ի հարցով: Մեկ այլ տեսանկյունից՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը

---

[1] Turkish Press and RFE/RL Newsline, 30 October 1998.

[2] **Cornell Svante E.,** 2005. p. 48.

կհանգեցնի Թուրքիայի և Ադրբեջանի հարաբերությունների վատթարացմանը: Ըստ այդմ, նրանց կարծիքով, «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը այլևս չի կազմում Անկարայի և Բաքվի հարաբերությունների համատեքստը:[1]

Այս տեսանկյունից Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը սպառնալիք է ոչ միայն Թուրքիայի և Ադրբեջանի եղբայրական հարաբերությունների, այլև նրանց տնտեսական հարաբերությունների համար: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, ըստ էության, կնպաստէր Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը: Սակայն արցախյան երկրորդ պատերազմը նպաստեց Թուրքիայի փառասիրական նպատակների իրականացմանը Կովկասում:

Թուրքիան Ադրբեջանին աջակցելով նպատակ ունի կոնֆլիկտում ամրապնդել Ադրբեջանի դիրքերը և տարածաշրջանում թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը:[2]

Ղարաբաղյան հակամարտության հարցում Թուրքիայի քաղաքականությունը ՀՀ-ի հանդեպ գնահատվել է որպես հարկադրման քաղաքականություն, որի նպատակն է պարտադրել որոշ նախապայմաններ, ինչպես ԼՂ-ում «տեղակայվելիք» միջազգային խաղաղապահ ուժերում ընդգրկել թուրքական ստորաբաժանումներ՝ ապահովելու Թուրքիայի ռազմական ներկայությունը Հարավային Կովկասում[3]:

Ձգձգվող բանակցությունների պատճառով հակամարտությունը անխուսափելիորեն փակուղի է մտում Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցում: Արդեն մոտ երեք տասնյամյակ է, ինչ բանակցություններում միջնորդի դեր են կատարում Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Մինսկի խմբի երեք համանախագահները՝ Ֆրանսիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները: Նրանք կենտրոնացած են մադրիդյան սկզբունքների վրա, որն առայժմ հաջողություն չի արձանագրել և հակամարտությունը նորից հանգեց պատերազմին:

---

[1] **Görgülü A., Iskandaryan A., Minasyan S.,** 2010.

[2] Kofman Michael (2 October 2020): «Armenia–Azerbaijan War: Military Dimensions of the Conflict»: *Russia Matters*: Belfer Center for Science and International Affairs: https://www.russia matters.org/analysis/armenia-azerbaijan-war-military-dimensions-conflict.

[3] Сафрастян Р., Значение изучения армяно-турецких отношений для современной теории международных отношений: предварительные замечания, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Եր., 2002, թիվ 21, էջ 147-155:

5.1. Պոլ Գոբլի և 1993թ. ԱՄՆ-ի ներկայացած ծրագրերի իրականացումը

Հարավկովկասյան քաղաքական դժվարին իրավիճակում պետք է գտնել լուծում, որը չի խախտի փոքրամասնության իրավունքները: Կարծիքներ կան, որ նման իրավիճակում անհրաժեշտ է արտաքին դերակատարների ներկայությունն ու ազդեցությունը, ովքեր ի վիճակի կլինեն կենտրոնական իշխանությունների դեմ ուժ գործադրել: Միջազգային երաշխիքների ազդեցության վերաբերյալ հիշատակվում է, օրինակ, Դայթոնի (Dayton) համաձայնագիրը Բոսնիա-Հերցեգովինայի մասին[1] և դրա իրականացումը:

Սակայն, ինչպես ցույց տվեցին տարածաշրջանի զարգացումները, միջազգային հանրությունը չկարողացավ վճռական դեր կատարել հարավկովկասյան տարածաշրջանում, մասամբ այն պատճառով, որ տվյալ տարածաշրջանը մնացել է Ռուսաստանի Դաշնության ազդեցության տակ: Հետևաբար, այդ փոքրամասնությունների առաջնորդները, ինչպես նաև հակամարտության գոտիների կենտրոնական կառավարությունները որպես երաշխավոր ուժի, ստիպված դիմեցին Ռուսաստանին:

Իսկ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ ներկայացվել են կարգավորման որոշ ծրագրեր, այդ թվում՝ Պոլ Գոբլի ծրագիրը, որով նախատեսվում էր ԼՂ-ի մի մասը միացնել ՀՀ-ին, իսկ մյուսը՝ ԱՀ-ին: Այդ ծրագրով ՀՀ-ն զրկվում էր ԻԻՀ-ի հետ ընդհանուր սահման ունենալու հնարավորությունից, իսկ Ռուսաստանը՝ Միջին Արևելքի հետ ցամաքային կապից[2]: 1993թ. ԱՄՆ-ը ներկայացնում է նման մի այլ ծրագիր, որի նպատակն էր հակամարտությանը վերջնական լուծում տալ: Ըստ այդմ՝ ապահովվում էր նաև Թուրքիայի և Ադրբեջանի ցամաքային անմիջական կապը Նախիջևանի վրայով: Այդպիսով Կասպից ծովի նավթի փոխադրումը Թուրքիա կատարվելու էր Ադրբեջանի տարածքով:

Այսօր ականատես ենք վերոհիշյալ ծրագրերի իրականացմանը 2020թ. արցախյան երկրորդ պատերազմի հետևանքվ՝ ի վնաս ՀՀ-ի և ԻԻՀ-ի:

Պետք է նշել, որ ըստ Է. Հերցիգի, ղարաբաղյան պատերազմն ուղղակի սպառնալիք է Իրանի ազգային անվտանգությանը նրա հյուսիսային սահմաններում[3]:

1980-ականների վերջից ի վեր ԼՂ-ի հակամարտությունը եղել է Իրանի սահմաններին ամենամոտ հակամարտություններից մեկը: Սա-

---

[1] Դայթոնի համաձայնագրի մասնին տե՛ս **Mirimanova Natalia.** Mediation and Dialogue: Official and Unofficial Strategies, MEDIATION AND DIALOGUE IN THE SOUTH CAUCASUS: A reflection on 15 years of conflict transformation initiatives, 2012, pp. 34-35.

[2] **Оганесян Н.,** Карабахский конфликт.Этапы. Подходы.Варианты решения, Ереван,1997, с. 55-57.

[3] **Herzig E.,**Iran and the Former Soviet South, London, Royal Institute for International Affairs, London, 1995, p 30.

կայն Իրանի համար Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը հատուկ նշանակություն ունի: Առաջին հերթին՝ հակամարտության մեջ ներգրավված երկու երկրներն էլ Իրանի հարևաններն են, և հետևաբար, հակամարտությունն ուղղակիորեն ազդում է Իրանի անվտանգության վրա:

6.Վերլուծություն: 2020թ. զարգացումները և հակամարտության կարգավորման հնարավոր տեսությունները

Ինչ վերաբերում է հայ-թուրքական ամենակարևոր հիմնախնդրին և 2020թ. Արցախյան երկրորդ պատերազմի քաղաքական վերլուծությանը, ապա հաշվի առնելով Պատրիկ Մորգանի առաջառկած վերլուծության հինգ մակարդակները[1], անհատական մակարդակի վերլուծության շրջանակներում ուշագրավ է ԱՀ-ի նախագահի պահվածքի վերլուծությունը: Ալիևի ինքնավստահությունը և արտահայած խոսքերը չեն կարող վերագրվել բացառապես բարձր ռազմական հզորության կամ առաջադեմ ռազմական տեխնիկայի պատճառով, այլ նման հուզական վարքագիծը և վստահությունը, պատերազմի մեջ գտնվող երկրի ղեկավարի կողմից բխում է նախապես որոշված ծրագրի մասին: Հաշվի առնելով Ադրբեջանի ռազմական հզորությունը, տարածաշրջանի աշխարհաքաղաքականությունն այնպիսին չէր, որ ադրբեջանական ռազմական ուժերը կարողանան կարճ ժամանակահատվածում արագորեն հասնել հաղթանակի: Այստեղ նպատակահարմար ենք համարում մեջբերելու Ֆրանկլին Ռուզվելտի հայտնի խոսքը, որի համաձայն «քաղաքականության մեջ ոչինչ պատահական չէ: Մի կասկածեք, որ պատահած յուրաքանչյուր դեպք պլանավորված է»:

Փաշինյանը իր քաղաքական գործողությունների ընթացքում կենտրոնացել էր ներքին քաղաքական զարգացումների վրա, իսկ մյուս կողմից՝ թերագնահատեց Ռուսաստանի դերը որպես երկարամյա և ավանդական տերություն Հայաստանում և տարածաշրջանում: Դա դժգոհությամբ ընդունվեց Պուտինի կողմից, քանի որ Ռուսաստանը չէր ցանկանում Վրաստանի և Ուկրաինայի իրադարձությունները տեղի ունենային նաև Հայաստանում: Փաստորեն, ներքին բարեփոխումների շտապողականության պատճառով Փաշինյանը չկարողացավ պահպանել հավասարակշռությունը ներքին և արտաքին քաղաքականության միջև, ինչը հանգեցրեց պատերազմի: Իսկ Ռուսաստանը Ադրբեջանին հնարավորություն տվեց օգտվել առիթից: Մյուս կողմից ԱՄՆ-ի ընտրությունները և աշխարհի ուշադրությունը այդ հարցի վրա կարևոր գործոնն էր, որ Ադրբեջանն ու Թուրքիան օգտագործեցին: Իսկ ՀՀ-ը չկարողացավ պահպանել

[1] 1. Անհատական վերլուծություն (individuals), 2.Որոշումներ կայացնող ինստիտուտների վերլուծություն (groups of individuals), 3. Ազգ-պետության վերլուծություն (nation states), 4. Տարածաշրջանային միությունների և մոդելների վերլուծություն (groups of countries), 5. Միջազգային համակարգերի վերլուծություն (international systems).

ստատուս քվոն և միջազգային հանրության ուշադրությունը սևեռելու պատերազմի վրա՝ ազդեցիկ և խարզմատիկ պետական այրի բացակայության պատճառով:

Այդ պատերազմի հետևանքով Ռուսաստանը ձեռք բերեց իր նախկին ազդեցությունը տարածաշրջանում՝ Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունների և նույնիսկ ժողովրդների պահանջով և կամքով: Անշուշտ ռուս խաղաղապահների ներկայությունը ԼՂ-ում նոր մարտահրավեր է Ադրբեջանի համար, որի հետ բախվելու է մոտ ապագայում: Ամփոփելով վերոհիշյալը, կարելի է ասել, որ Ռուսաստանը ամենաքիչ ջանքերով կարողացավ նպաստավոր իրավիճակ ստեղծել իր կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների համար: Ռուսաստանը սպասում է Հայաստանում ներքին մթնոլորտի հանդարտեցմանը և ՀՀ-ում նոր կառավարության հաստատմանը, որից հետո տարածաշրջանում խաղաղություն և կայունություն հաստատել և ԼՂ-ի հիմնախնդիրին իրավական լուծում տալ:

Կովկասյան տարածաշրջանում առկա իրավիճակը կարող է կայուն և հուսալի լինել՝ Դյվիդ Միտրանու [1] ֆունկցիոնալության[2] տեսության հիման վրա ստեղծվող մոդելի շրջանակներում: Միտրանին կարծում էր, որ իրավական համաձայնագրերը և բացառապես կառավարությունների միջև խաղաղության պայմանագրի կնքումը չեն կարող լուծել կառավարությունների միջև առկա խնդիրները և տարաձայնությունները, սակայն կայուն և ամուր համաձայնության համար անհրաժեշտ է համատեղ և գործնական քայլեր կատարել: Ֆունկցիոնալիզմի մոդելի հիման վրա՝ Թուրքիան, Ադրբեջանը և Հայաստանը, համագործակցելով Ռուսաստանի Դաշնության և Իրանի Իսլամական Հանրապետության հետ կարող են ծրագիր մշակել՝ ըստ տնտեսական ոլորտում յուրաքանչյուր երկրի ներուժի և եզակի կարողությունների հիման վրա: Հաշվի առնելով միջազգային հանրության համար տնտեսության ոլորտի կարևորությունը՝ դա կհանգեցնի տնտեսական-առևտրային դաշինքների, ինչն անշուշտ կնվազեցնի քաղաքական բացերը:

Դեյվիդ Միտրանին առաջարկեց ֆունկցիոնալության տեսությունը այն ժամանակ, երբ Եվրոպան կանգնած էր խոր ճգնաժամի առջև: Սույն տեսությամբ նա իրականում առաջարկեց գլոբալ կամ տարածաշրջանային ինտեգրումը: Ֆունկցիոնալությունը հենվելով տնտեսական զարգացման և սոցիալական բարեկեցության վրա, ստեղծելով տարածաշրջանային և միջազգային միություններ, ձգտում է նվազագույնի հասցնել վեճերը պետությունների միջև: Եվրամիության փորձը, որը սկզբում ձևավորվեց տնտեսական զարգացման նպատակով, այնուհետև հանգեցրեց քաղաքա-

[1] David Mitrany

[2] Functionalism

կան և անվտանգության համագործակցության, կարող է որպես հաջողված մոդել օգտագործվել Կովկասի տարածաշրջանի երկրների համար:

Հարաբերությունների ընդլայնմամբ և երկրների համադրության (կոնվերգենցիայի) պայմաններում պետությունների և ազգերի շահերն ու նպատակները միահյուսվում են միմյանց և հանգեցնում են տարածաշրջանում անդրազգային համագործակցությունների[1] կամ, այլ կերպ ասած, գործող և գործունյա խաղաղության համակարգի[2]: Ըստ Միտրանու տեսության, տարածաշրջանային միությունների և ձեռնարկությունների ձևավորումը հանգեցնում է լարվածության և անապահովության թուլացմանը: Ինչը, անշուշտ, պահանջում է էլիտայի ակտիվ գործունեություն:

Ամենակարևոր մարտահրավերը, որի հետ բախվում է այս նպատակը, տարածաշրջանի երկրների միջև քաղաքական կոնսենսուսի բացակայությունն է: Ոչ-տարածաշրջանային երկրները նույնպես օգտվում են քաղաքական-անվտանգության բացթուղումների առիթից:

Տողերիս հեղինակի կարծիքով կովկասյան տարածաշրջանի երկրները կարող են օգտագործել Եվրամիության մոդելը, որը հիմնված է Դեյվիդ Միտրանու ֆունկցիոնալության տեսության հիման վրա և ստեղծել տնտեսական միություն, որին կարող են մասնակցել տարածաշրջանի երկրները և տարածաշրջանում ազդեցություն ունեցող այլ երկրները**:** Եվրասիական միության նման մի միություն, որը վերջին տարիներին ակտիվ գործունեություն է ծավալում, բայց դրան չի հաջողվել քաղաքական հակասություններն ուղղել դեպի տնտեսական համագործակցություն:

Տարածաշրջանում անհրաժեշտ է ստեղծել տնտեսական միություն, որը. 1. հետապնդի ընդհանուր տնտեսական նպատակ: 2. բոլոր երկրների անդամակցությունը՝ անկախ տարաձայնություններից և բախումներից: 3. շահերի հավասար բաշխում:

Տնտեսական համագործակցությունը՝ ներդրումների կատարման միջոցով կանխարգելիչ երաշխիք կլինի ապագայում հնարավոր լարվածություն չեզոքցման և պատերազմի կանխարգելման հարցում:

Ի դեպ վերջին իրադարձությունները դժվարին դրության մեջ են դրել Հայաստանին՝ արագ և վճռական որոշումներ կայացնելու համար: Մի կողմից, երկրի ներսում տեղի ունեցող քաղաքական զարգացումները, իսկ մյուս կողմից՝ Ադրբեջանի հետ պատերազմը նորաստեղծ կառավարության համար անհնար է դարձրել ներքին և արտաքին քաղաքական զարգացումների հավասարակշռությունը պահպանել:

Մի այլ կարևոր մարտահրավեր, որին Հայաստանը բախվելու է ապագայում, ինչպես նշվեց ավելի վաղ, տարածաշրջանում Թուրքիայի ազ-

[1] Transnational cooperation

[2] Working Peace System

դեցության աստիճանական մեծացումն է և թուրք-ադրբեջանական հարաբերությունների ամրապնդումը՝ հաշվի առնելով երկու երկրների միջև ցամաքային կապի ընդլայնումը, որն ուղղակիորեն դրական ազդեցություն կունենա թուրք-ադրբեջանական ինքնության քաղաքականություն վրա:

Թուրքիան և Ադրբեջանը հիմնվելով լեզվական, մշակութային, կրոնական և քաղաքական ընդհանրությունների վրա դաշինք են կազմում և տարածաշրջանում սահմանում են իրենց բարեկամության և թշնամանքի նոր մոդելներ, որոնք կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսական, քաղաքական և անվտանգային մեկուսացմանը և նոր հակամարտություններին: Հանթինգթոնը նման իրավիճակը նկարագրում է հետևյալ կերպ. մարդիկ հակված են լինում այն մարդկանց, ում հետ ունեն ընդհանուր ծագում, կրոն, լեզու, և արժեքներ: Եվ նրանք հեռու են մնում նրանցից, ովքեր իրենց հետ ոչ մի ընդհանուր բան չունեն:

Դա կարող է հանգեցնել Հայաստանի և Իրանի տնտեսական, քաղաքական և անվտանգային մեկուսացմանը և հակամարտությունների սրմանը: Քանի որ միջանցք ստեղծելով՝ Իրանը կզրկվի Հայաստանի Հանրապետության, Վրաստանի և Ռուսաստանի հետ անմիջական կապի հնարավորությունից:

Ցավոք, այսօր ականատես ենք Պոլ Գոբլի ծրագրի իրականացմանը 2020թ. արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով՝ ի վնաս ՀՀ-ի և ԻԻՀ-ի.

Афсане Ширани, Армяно-Турецкие отношения в контексте Карабахской проблемы - После Второй нагорно-карабахской войны в 2020 году начинается новый этап в истории давнего армяно-турецкого конфликта. Три десятилетия переговоров по Нагорному Карабаху пока что провалились; конфликт снова привел к войне, осложнив тяжелую политическую ситуацию на Южном Кавказе. В статье рассматривается развитие нового периода армяно-турецкого конфликта, представлена теория функционализма Давида Митрани в обеспечении стабильности и безопасности в Кавказском регионе.

Afsaneh Shirani, Armenian-Turkish relations in the context of the Karabakh issue - After the Second Nagorno-Karabakh War in 2020, a new stage in the history of the long-standing Armenian-Turkish conflict begins. Three decades of negotiations over Nagorno-Karabakh have so far failed; the conflict has again led to war, complicating the difficult political situation in the South Caucasus. This article discusses the developments in the new period of the

Armenian-Turkish conflict, presents the theory of David Mitrany's[1] Functionalism[2] in ensuring stability and security in the Caucasus region.

[1] David Mitrany
[2] Functionalism

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ և ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԻՇԽՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

ՄԻՔԱՅԵԼ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Բանալի բառեր - Թուրքիայի Հանրապետություն, էներգետիկ քաղաքականություն, <<Արդարություն և զարգացում>> կուսակցություն, միջուկային էներգետիկա, խաբ, ռեգիոնալ քաղաքանություն:

Առկա քաղաքական բարդ իրավիճակի պայմաններում էներգետիկ քաղաքականությունը միշտ գտվնում է պետության ուշադրության ներքո: 2000-ական թթ.-ից սկսած էներգետիկ ենթատեքստը բազմիցս շեշտադրվել է Թուրքիայի ազգային անվտանգության համատեքստում որպես կայուն զարգացման հիմնարար գործոն: <<Արդարություն և զարգացում>> (ԱԶ) կուսակցության իշխանության գալուց հետո մի շարք քայլեր ձեռնարկվեցին էներգետիկ քաղաքականության հարցերի քաղաքական վերահիմաստավորման համար, որոնք հետագայում բաժանվեցին ներքաղաքական և աշխարհաքաղաքական ուղությունների: Էներգիայի ներքին սպառման կանխատեսվող աճի պայմաններում՝ (45% մինչև 2030թ.), կուսակցության ղեկավարությունը որոշեց տվյալ ասպեկտը ներդնել քաղաքական ռազմավարության օրակարգ:[1]

Էներգետիկ նախաձեռնությունների տոտալ տրանսֆորմացիան սկսվեց Աբդուլլահ Գյուլի 2007-2014 նախագահության օրոք, սակայն տեսականորեն ամրագրվեց միայն Էրդողանի կառավարման օրոք: Առաջին հերթին կուսակցության ղեկավարությունը խնդիրներ էր տեսնում էներգետիկ ենթակառուցվածքների թերզարգացվածության մեջ, խնդրահարույց էր դարձել ողջ արևելյան ռեգիոնը: Ելնելով այն թեզից, թե Թուրքիան ունի և կունենա զարգացած արևմուտք ոչ կայուն արևելքի հետ, դարձավ ժամանակի ընթացքում կուսակցության ներքին քաղաքականության առանջահերթ ուղղությունը: Մասնակիորեն Թուրքիայի ղեկավարությունը կողմնորոշվեց հիմնականում ներկրման վրա, սակայն տարածաշրջանում առկա քաղաքական անկայունության պայմաններում նախաձեռնեց էներգետիկ քաղաքականության վերահիմաստավորման քայլեր: Մասնավորապես, մինչև 2014 թ. ներդրում իրականացվեց մանր և միջին ՀԷԿ-երի

[1] **S.Erdogan, A. Gedikli, S.** Yilmaz Genc // An overview of Turkey's national energy policies, Politico-Economic Evaluation of Current Issues Cambridge international academics, 2018.